ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"28 "հունիսի 2012թ. № 44-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ « ԼԵՀՎԱԶԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ - ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012թ. հունիսի 22-ի <<Լեհվազի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և ընտրված տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N 89-Ա որոշումը, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1.2012թ. հունիսի 29-ից լուծել <<Լեհվազի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Ժորա Միրզոյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2.2012թ. հունիսի 29-ից <<Լեհվազի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակել Վարսենիկ Վարդանյանին, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կոզմանով Կառլեն	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Գրիգորյան Արսեն	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
Հարությունյան Գայյա	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ
Վարդանյան Վարսենիկ	«Լեհվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրեն (ընդունող)
Միրզոյան Ժորա	«Լեհվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ նախկին տնօրենի պաշտոնակատար (հանձնող)

4.Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

5.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործարքների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.հունիսի 28
ք. Կապան